

Գ. Սափուհյան

„ԱԳԱՊԻ ԴԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ“ ՎԵՊԻ ՄԱՍԻՆ

Միջայել նախնական «Սոս և Վարդիթերի» մասին գրած իր քննադատական մեջ՝ տալով հայ նոր գրականության սկզբնավորման պատկերը, խոսում է Խ. Արուվյանի «Վերք Հայաստանի», Պ. Պոռյանի «Սոս և Վարդիթեր», Գ. Տեր-Հովհաննիսյանի «Տեր Սարգիս» երկերի մասին և հիշատակում է մի ուրիշ վեպ, «Ագապի» վերնագրով, որը լույս է տեսել Կ. Պոլսում, հայատառ թուրքերեն լեզվով։ Նախնական այս գործը շատ բարձր է գնահատում թե՛ իր գաղափարական բովանդակությամբ և թե՛ գեղարվեստական արժանիքներով։ Նա գրում է հետևյալ չափազանց ուշագրավ տողերը.

«Մենք մի ուրիշ աշխատություն էլ գիտենք, հայ հեղինակի, հայոց կյանքից բխած, մի շատ կենդանի և շատ սրտաշարժ գործ, բայց ձախողակի, հայ գրող թեև, այլև այնպես տաճկերեն գրած։ Մենք խոսում ենք «Ագապի» մականգրով ազգային վիպասանության մասին։ Խրթին տաճկաբանությամբ է գրած և մեր փոքր ի շատե տաճկագիտությունը տկար է այդ գիրքը թարգմանելու համար. (այնտեղ շատ արաբական կամ պարսիկ բառեր կան, որ մենք չենք հասկանում) բայց և այնպես, գործի սկզբից մինչև վերջը մեր զմայլանքը անելով անում էր, երբ կարդում էինք այն հոգեշարժ, սրտաշարժ և տխուր անցքի պատմությունը, ուր ազնիվ օրիորդը — Ագապին զոհ է գնում գիշերադեմ մարդոց դժոխային կրոնամոլության և դավաճանության, որին կարող էր նախանձել և ինքը լոյուան, ուր ազնիվ սիրահարը — Հակոբ աղան — նույնպես զոհվում է մի ջլալին տենդի, որ առաջացել էր Ագապի օրիորդի սգալի վախճանի պատճառած հարվածից։ Բնականությունը և արվեստը իրար հետ լծորդված են այդ գործի մեջ։ «Վերք Հայաստանին» շունի այնքան արվեստ. «Սոս և Վարդիթերը» «Վերք Հայաստանուց» էլ քիչ ունի։ Ագապին, արվեստի կողմից, կարող է դիմանալ խիստ բնադատության։ Բնականության կողմից և հոգեբանական հարազատության մասին շատ բարձր է եվրոպական ամենավուր վիպասանություններից։ Մենք ցավում ենք և ցավելով չենք կարող շմեղադրել մեր Պոլսեցի եղբայրակիցքը, որ մինչև այժմ հայերեն չթարգմանեցին այդ գործը։* Թե ինչ պատճառով տաճկերեն է գրել դորա հեղինակը կամ թե ով է այդ ազնիվ հեղինակը, մեզ հայտնի չէ։ Իրիքը տպած է անանուն։ Ծրանի թե մեկ օր հայերեն կարդայինք այդ հոյակապ և ազնիվ գործը։ Ավելորդ է ասել, որ միայն Տաճկաստանի առաջնակարգ գրագետի բան է նորան թարգմանելը. չլինի թե Ռուսիայի հայերը փորձ փորձեն»¹ (Ընդգծումները մերն են — Գ. Սա.)։

Հայ նոր գրականության սկզբնավորման առաջին տասնամյակում, երբ հազիվ մի քանի գործ է եղել հրապարակի վրա, այսպիսի մի գրական արժե-

* Ալեքսանդր Դյումայի «Գոթական մատուռն են թարգմանում. արդարև, մարդասերն իր դավառի մեջ սլատիվ չունի»։ Ինչ ասես. (ծան. հեղ.)։

¹ Մ. Նալբանդյան, Երկեր, հատ. 3, էջ 120։

քավոր երկի հանգես գալը, այդ երկի բարձր գնահատումը «Սոս և Վարդիթերի» կրիտիկայի» հեղինակի կողմից, բնականաբար հետաքրքրելու էին գրականագետներին:

Ուլ է վեպի հեղինակը, ինչ հարցեր են արծարծվել այնտեղ, ինչ հասարակական-քաղաքական պայմանների, պայքարի ծնունդ է եղել «Ագապին», ինչու այդքան արժեքավոր մի վեպի հեղինակը թաքցրել է իր իսկությունը: Նվ վերջապես այդ աստիճան ուշագրավ մի երկի հեղինակն արդյոք ուրիշ գեղարվեստական գործեր էլ չի թողել:

Նալբանդյանագետների վերջին 15 տարիների ուսումնասիրությունները դժբախտաբար ոչինչ դրական արդյունք չեն տվել այս հարցերի պատասխանը գտնելու ուղղությամբ: Նրանց հաջողվել է իմանալ, միայն, թե երբ է լույս տեսել վեպը, ինչ է նրա լրիվ վերնագիրը, քանի էջից է բաղկացած:

Նալբանդյանի «Անտիպ երկերում», որտեղ առաջին անգամ տպագրվել է «Սոս և Վարդիթերի» կրիտիկան», այդ վեպի մասին կա հետևյալ ծանոթագրությունը.

«Նալբանդյանի հիշած վիպասանությունը լույս է տեսել Կ. Պոլսում, 1851 թվին «Ագապի Հիքեանեսի» վերնագրով, ութածալ 438 էջ, մեծատառ, գրվածքը հեղինակի անուն չունի: Պրոֆ. Հ. Աճառյանի միջոցով մեր ստացած տեղեկությունների համաձայն, «Զվարթ պատմվածքներ են, խոսակցության ձևով, պոլսական կյանքին»: Պոլսի «Մեղուն» — խոսելով գրքի մասին, համարում էր այն «պատմական և ազգային կենաց ճշգրիտ պատկեր եղող գիրք»:¹

Անհամեմատ ավելի սեղմ ու ոչինչ չափող ծանոթագրություն է Նալբանդյանի երկերի երրորդ հատորում տրված բացատրությունը, որ կրճատ կերպով կրկնում է նախորդին:

Այս երկու ծանոթագրություններն էլ որևէ նոր բան չեն ավելացնում Նալբանդյանի հաղորդածի վրա: Ընդհակառակը, դրանցից առաջինը մասամբ սխալ պատկերացում է տալիս գրքի մասին, այն համարելով պոլսական կյանքից վերցված զվարճալի պատմվածքների մի ժողովածու, մինչդեռ հենց Նալբանդյանի հիշատակումից երևում է, որ գործ ունենք որոշակի սյուժետի վրա կառուցված մի ծավալուն վեպի հետ:

Հարցը ավելի հետաքրքիր էր դառնում այն պատճառով, որ իր ժամանակին «Մեղուն» այդ վեպը բարձր էր գնահատել, դժբախտաբար շատ սեղմ տողերով:

«Մեղուն» իր 1864 թվի 234-րդ համարում խոսելով Կարապետ Փանոսյանի «Իսլահաթը Մուհիմե» («Կարևոր բարեկարգություններ») բրոշյուրի մասին, որտեղ հեղինակը առաջարկում էր կրոնական պսակին զուգընթաց կիրառել նաև քաղաքացիական ամուսնության ձևը (որպեսզի դավանափոխ եղողները չկարողանան իրենց երեխաներին ու ամուսիններին թողնել), գրում էր.

«Կարգացեք «Ագապի Հիքեանեսի» պատմական և ազգային կենաց նշույտ սյուսկերն եղող գրքին մեջ Ագապիի և Հակոբի վիճակը և շղջա որ թերահավատիք, անի վիպասանություն մը ըլլալուն համար, վասնզի անոնց չափ և քան զանոնք էվել ողբալի վիճակ ունեցող երիտասարդաց իրական պատմություններ ալ գիտեք դուք»:² (Ընդգծումը մերն է — Դ. Ստ.):

¹ Մ. Նալբանդյան, Անտիպ երկեր, էջ 292:

² «Մեղուն» 1864, № 234:

Ուրեմն «Մեղուն» Ագապիի պատմությունը հիշատակել է ոչ պատահականորեն, այլ այն օգտագործել է հոգևորականության դեմ մղած իր պայքարում:

Մենք՝ հայատառ թուրքերեն գրականությանը նվիրված մեր մենագրության պատրաստման ընթացքում հատուկ ուշադրություն դարձրինք այս գործի վրա: Վեպը գտնելու ուղղությամբ մեր կատարած ջանքերը, դժբախտաբար, անցան ապարդյուն: Ուղիղ հարյուր տարի առաջ լույս տեսած այդ գրքից և ոչ մի օրինակ հնարավոր չեղավ գտնել:

Մեզ հաջողվեց գտնել միայն մի երկու փոքր ու թուլցիկ հիշատակում «Ագապիի» մասին:

«Արշալույս Արարատյանի» 1852 թվականի մի քանի համարներում հանդիպեցինք ընդարձակ մի հայտարարության, որը բավականաչափ լույս էր սփռում «Ագապիի» իդեական բովանդակության վրա:

Այդ հայտարարությունից պարզվեց՝

ա) որ վեպը սուր քննադատության է ենթարկում հայ «երիտասարդաց բարքը և վարքը», նրանց ֆրանսամոլությունը, եվրոպական կենցաղավարությանը կապկորեն հետևելը:

բ) Որ վեպը տենդենցով գրված, թերթի բառերով ասած՝ «դպչողական մի գործ է», այսինքն խորապես գաղափարական մի երկ:¹

Ֆրանսիացի արևելագետ Ղյուլոռիեն էլ մի ուշագրավ վկայություն ունի «Ագապիի» մասին:

Ղյուլոռիեն, խոսելով այդ վեպի մասին, ի միջի այլոց գրում է.

«Իր պատկերներով ու դեմքերով ազգային երկ է և վառ գույներով է նկարագրում Կ. Պոլիսի հայ հասարակության մի կողմը այն գրվածքը, որի հերոսուհին երիտասարդ աղջիկ Ագապին է... Վեպի հիմնական իմաստը կրոնական վեճն է, իսկ նպատակն է ազդել ռամիկ ժողովրդի վրա: Դա իսկապես լուսավորչականների կողմից կաթոլիկների դեմ ուղղված մի բողոք է: Ագապին լուսավորչական դավանանք ունի, իսկ նրա սիրահարը կաթոլիկ է: Պապական իշխանության ներկայացուցիչ պրիմասը, սաստիկ հակառակ է այլադավանների հետ ամուսնանալուն, այդ պատճառով էլ, ամենաստոր միջոցների է դիմում, որ խափանի նրանց ամուսնությունը... Գրողին խթանող կրոնական կիրքը հաջողություն է տվել նրան՝ այնպես որ, չնայած հոգևոր իշխանության հալածանքներին, այդ վեպը հազարավոր ընթերցողներ է ունեցել»² (Ընդգծումները մերն են — Գ. Ստ.):

Սրանք են այն տեղեկությունները, որ մենք ունենք հիշյալ վեպի մասին: Ուրիշ՝ որեւէ աղբյուր մեզ հայտնի չէ: Եվ հասկանալի է, որ այսքան սակավ տեղեկությունների հիման վրա անհնարին էր որեւէ ամբողջական գաղափար կազմել վեպի մասին:

1950 թ. սեպտեմբեր ամսին Հայկական ՍՍՌ ԳԱ-ի Մ. Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտը ԱՕԿՍ-ի միջոցով ձեռք բերեց այդ հազվագյուտ գրքի մի պատճենը, որով այժմ մեր տրամադրության տակ ունենք ամբողջ գործը և կարող ենք որոշակիորեն ասել, թե որքանով իրավացի էր Նալբանդյանը այդքան բարձր կարծիք հայտնելու այդ վեպի մասին:

¹ «Արշալույս Արարատյան», 1852, № 412:

² Э. Д ю л о р и е, Нынешние армяне, Тифлис, 1856, стр. 71—73.

Նախ պարզենք այն հարցը, թե ինչո՞ւ Նալբանդյանը այնքան հրապուրվել է օտար լեզվով գրված վեպով և ամենևին ուշադրության չի առել նույն 1851 թվին լույս տեսած «Խոսարով և Մաքրուհի» աշխարհաբար վեպը, և 1861 թվին, հենց իր Կ. Պոլիս այցելած օրերին լույս տեսած «Էլիզա» վեպը, մանավանդ որ վերջինիս հեղինակը՝ Արմենակ Հայկունին, եղել է Նալբանդյանի համախոհներից, Իզմիրի Հաշտենց ընկերության անդամներից մեկը:

Այս հարցի պատասխանը պարզ կլինի, եթե մենք համեմատելու լինենք այդ երեք վեպերը միմյանց հետ: «Խոսարով և Մաքրուհի» և «Էլիզան», ճիշտ է, գրված են հայերեն, աշխարհաբար լեզվով, բայց ոչ մի կապ չունեն հայ իրականության հետ, եթե փոխելու լինենք առաջինի հերոսների անունները, իսկ երկրորդից հանենք հեղինակի մի շարք դատողությունները հայ ժողովրդի ճակատագրի մասին, ապա մենք կունենանք միանգամայն օտար միջավայրի ծնունդ երկու ռոմանտիկական վեպ, որոնք, հասկանալի է, որ չէին կարող գրավել Նալբանդյանին:

Միանգամայն այլ է «Ագապին»: Այս վեպը ամենից առաջ ռեալիստական գործ է և վառ պատկերներով արտացոլում է Կ. Պոլսի հայ իրականության բնորոշ գծերը:

Ուրեմն՝ «Ագապին», Նալբանդյանին գրավել է երկու կարևոր արժանիքներով, նախ իր շեշտված գաղափարական բովանդակությամբ, որի հիմքում ընկած է պայքարը կաթոլիկության դեմ, և երկրորդը՝ գաղափարական այդ առույզ բովանդակության մեծ արվեստով մատուցմամբ, այսինքն իր գեղարվեստական արժանիքներով, մի վեպ, որի մեջ, ինչպես Նալբանդյանն է ասում, «բնականությունը և արվեստը իրար հետ լծորդված են», որի համար էլ «Ագապին» «արվեստի կողմից կարող է դիմանալ խիստ քննադատության»:

Վեպի առաջին մի քանի գլուխներում նկարագրվում է հայ կաթոլիկ հարուստ Սարգիս աղայի ընտանիքը, նրա շրջապատի այլասերված բարքերը, նրա որդու՝ բթամիտ և թեթևոլիկ Ռուբենիկի անբարոյական կյանքը:

Այս շրջապատի մեջ երևում է նաև Հակոբը, նույնպես հայ կաթոլիկ, որը միանգամայն այլ համոզմունքների ու գաղափարների տեր է, օժտված դրական շատ գծերով: Հակոբը սիրում է հայ լուսավորչական Ագապին, հանդիպումներ է ունենում, ուզում է ամուսնանալ նրա հետ, այս բանն իր լրտեսներին միջոցով իմանում է պապական գործակալ մոսուե Ֆասիտյանը, և խանգարում այդ ամուսնությունը, որպեսզի հայ իրականության երկու հատվածները չմոտենան միմյանց:

Ֆասիտյանի արտակարգ դաժանություններից հուսահատության մեջ են ընկնում Հակոբն ու Ագապին, որը ի վերջո, թույն է ընդունում ու նետվում ծովը, իսկ Հակոբը, որ արդեն հիվանդացել էր, աղքատ մահից հետո վշտից մեռնում է:

* * *

Ասացինք, որ այս վեպի գաղափարական բովանդակությունը խարսխված է կաթոլիկների դեմ մղվող պայքարի վրա: Ինչով էր կաթոլիկության դեմ մղվող պայքարը հրատապ այդ տասնամյակներում: Հայտնի է, որ եվրոպական գաղութարարներն իրենց տնտեսական ու քաղաքական էքսպանսիան Հեռավոր Արևելքում տարածելուց, Հնդկաստանը, Չինաստանը և այլ երկրներ ստրկացնելուց հետո, 19-րդ դարի առաջին քառորդից սկսած տենդագին աշ-

խատանք էին տանում Մերձավոր Արևելքը, այդ թվում նաև Թյուրքիան ստորկացնելու համար:

Եվրոպական գաղութարարներն իրենց էքսպանսիայի տարածման համար օգտագործում էին քրիստոնեական կրոնը և այն քարոզելու պատրվակով կատարում էին լրտեսական քաղաքական աշխատանք, որը հետապնդում էր կրկնակի նպատակ, նախ՝ տեղեկություններ վերցնել երկրի տնտեսական ու քաղաքական վիճակի մասին և երկրորդ՝ նպաստել եվրոպական վաճառականությանը, արդյունաբերական ձեռնարկություններին՝ Թյուրքիայի հումուլթր արտահանելու, եվրոպական արդյունաբերական ապրանքներով թյուրքական շուկան ողողելու համար: Կաթոլիկ պրոպագանդիստներն ու միսիոնարական կազմակերպությունները խոշոր աշխատանք են ծավալում հայ իրականության մեջ:

Կաթոլիկների աշխատանքը գնում էր երկու ուղղությամբ: Մի կողմից գերազանց խստությամբ ատելություն քարոզելով լուսավորչականների դեմ, դաժանությամբ արգելելով լուսավորչականների հետ ամուսնանալը, մտերմանալը, նույնիսկ նրանց փողոցով անցնելը, մյուս կողմից՝ խաբելու, սիրաշահելու, շղոթորթելու եղանակով, որի արտահայտման ձևերն էին նոր կաթոլիկացող հայերին նյութական օգնություն տալը, սովի ժամանակ ցորեն, ալյուր բաժանելը, ձրի բուժ. օգնություն ցույց տալը և այլն:¹

Կաթոլիկները Վատիկանի հրահանգներով, իրենց աշխատանքը ուժեղացնում են հատկապես հայ ժողովրդի այն հատվածի մեջ, որը պատմական դեպքերի բերումով, մայր երկրից կտրված լինելու հետևանքով, կորցրել էր մայրենի լեզուն և խոսում էր թուրքերեն: Կ. Պոլսի հայ կաթոլիկները, մանավանդ բուրժուականացող խավը, արհամարհում ու ծաղրում էր հայերեն լեզվով խոսողներին: Կ. Պոլսի պայմաններում օտարացած այդ կաթոլիկների արտակարգ մոլեռանդությունն է պատկերել Գր. Զոհրապը իր «Արմենիսա» գեղեցիկ նովելում: Հայ կաթոլիկ բուրժուազիան միանգամայն տարբեր քաղաքական համոզմունքներ էր պաշտպանում նաև ազգային ազատագրական հարցում: Թուրքախոս կաթոլիկ հայերի մի մասը, որն աշխատում էր պետական ծառայության մեջ, մերժում էր ամեն մի ազատագրական պայքար, իսկ կաթոլիկ հայերի ավելի ճնշող մասը, եռանդուն աշխատանք էր կատարում Հայաստանը Ֆրանսիայի գաղութը դարձնելու համար:

Հասկանալի է ու բնական, որ այս քաղաքական պայքարում միանգամայն առաջադիմական էր այն հոսանքի մոտեցումը, որի նպատակն էր պայքար մղել օտար էքսպանսիայի դեմ, պաշտպանել հայ ժողովրդի միասնականությունը:

19-րդ դարի 50—80-ական թվականներին արևելահայ և արևմտահայ մամուլում կաթոլիկական պրոպագանդայի դեմ ուժեղ պայքար էր մղվում: Այդ պայքարի առաջին դրոշակակիրներն էին առաջավոր դեմոկրատական մտածողները՝ Կ. Պոլսում «Մեղվի» շուրջը համախմբված մարդիկ՝ Սվաճյանը, Կ. Փանոսյանը, Արմենակ Հայկունին և ուրիշները, արևելահայաստանում

¹ Տնտեսական դժվարության հետևանքով շատ լուսավորչական հայեր առերես ընդունելով կաթոլիկությունը, ստանում էին նրանց նյութական օգնությունը ու նորից հրաժարվում կաթոլիկությունից: Եվ երբ հարցնում էին պատճառը, նրանք պատասխանում էին «ուն պիտտի տին պիտտի» (ալյուրը վերջացավ, կրոնն էլ հետը վերջացավ):

«Հյուսիսսփայլ»-ի դեմոկրատական թևը՝ Մ. Նալբանդյանի գլխավորությամբ:

Հայտնի է, թե Մ. Նալբանդյանն ինչպիսի կրթությունով մերկացնում էր եվրոպական գաղութարարների ոտնձգություններն Արևելքում, գաղութարարներ, որոնք «քաղաքակրթություն» տարածելու պատրվակի տակ ստրկացնում էին փոքր ժողովուրդներին:

Նալբանդյանը տեսնում էր, որ օտարերկրյա այդ գաղութարարների քաղաքական ու տնտեսական գործունեությանը շատ հաճախ նախորդում էր այսուպես կոչված «դավանաբանական» և «կուլտուրական» ներթափանցումը: Այստեղից պարզ է դառնում Նալբանդյանի այնքան սկզբունքային ու անողորպ պայքարի միսիոնարների ու կաթոլիկների դեմ: Նալբանդյանի ուշագրավ առաջաբանը՝ կցված «Թափառական հրեային», նրա այնքան արժեքավոր հոդվածները «Հիսուսյանք», «Մխիթար Սեբաստացի և Մխիթարանք» վերնագրերով, հետապնդում էին նույն քաղաքական նպատակը:

Ուշագրավ է, որ Նալբանդյանը «Ագապի» մասին այդ տողերը գրել է հենց նույն այն օրերին, երբ գրել է նաև իր հայտնի «Նկատողությունք» հոդվածը, որտեղ մերկացնում էր կաթոլիկական պրոպագանդան:

Նալբանդյանը պայքարում էր կաթոլիկության, այդ թվում և Մխիթարյանների դեմ, որոնք գործիք դարձած Վատիկանի, «Դանակ են սրում, որ ազգի վերջին շնչի պահպանման անոթը ևս փողոտեն»:¹

Այդ նույն թշնամու դեմ էր պայքարում «Մյունատեի» խմբագիր Կարապետ Փանոսյանը իր մի քանի բրոշյուրներով՝ գրված հայատառ թուրքերենով, Արմենակ Հայկունին՝ ամերիկյան միսիոնարների դեմ գրված գրքույկներով («Պղատոն ի Ոսփոր», «Թուրքանտա տուտու» և այլն):

Այդ նույն նպատակն էր հետապնդում արևմտահայ դեմոկրատ լուսավորիչ Ստ. Ոսկանը իր «Արևելք» և «Արևմուտք» պարբերականներում մերկացնելով կաթոլիկության էությունը, Մխիթարյանների հարյուրհիսունամյա գործունեությունը բնութագրելով որպես «հռոմեական թթվաշ խմորով» տոգորված մի ռեակցիոն գործունեություն:

Եվ միայն գաղափարական այս առողջ նպատակասլացածությամբ պետք է բացատրել Նալբանդյանի հիացմունքը այդ գրքի նկատմամբ, Նալբանդյանի, որը նույնիսկ ընկել էր ծայրահեղության մեջ, «Ագապին» համեմատելով «Վերք Հայաստանի»-ի հետ: Ինչ խոսք, որ այն երբեք չէր կարող համեմատվել Արովյանի անմահ երկի հետ, որը դարագլուխ կազմող մի գործ է և արտացոլում է հայ ժողովրդի պատմական ճակատագրի հետ կապված այնպիսի մի կարևոր հարց, ինչպիսին է Արևելյան Հայաստանի միակցումը Ռուսաստանին, հայ ժողովրդի մի մեծ հատվածի ազատագրումը թյուրքական և պարսկական բարբարոսական լծից և նրա հաղորդակից դառնալը ռուսական մտավոր զարգացմանը:

Կաթոլիկության դեմ մղվող պայքարը վերջում գնում է երկու ուղղությամբ, մի կողմից Հակոբի հոր՝ Վիչեն աղայի կամակորոթյան քննադատությամբ, Վիչեն աղայի, որն այնքան խստությամբ արգելում է որդուն լուսավորչական աղջկա հետ ամուսնանալ, մյուս կողմից պապական գործակալ Ֆասիտյանի ինկվիզատորական արարքների մերկացմամբ:

¹ Մ. Նալբանդյան, Երկեր, հատ. 3, էջ 220:

Ինչքան էլ որ այս երկու անձնավորությունները արտաքինապես գտնվում են գաղափարական նույն դիրքերում, պայքարում են կաթոլիկական վարդապետության տարածման համար, այնուամենայնիվ, միանգամայն տարբեր մարդիկ են:

Հեղինակը քննադատում է Վիչեն աղայի տգիտությունը, միամտությունը, որոնք հասարակական կյանքում ծնում են բազմապիսի շարիքներ:

Ո՞վ է Վիչեն աղան: Ամենից առաջ նա գերի է կրոնական կույր մոլեռանդության, նրա համար գոյություն չունի որևէ այլ սրբություն, բարոյական նորմա, քան կաթոլիկական կրոնի դոգմաները: Նվ որովհետև այդ դոգմաների պահպանման հետ կապում է նա հանդերձալ կյանքի երջանկությունը, — ավելի ճիշտ՝ որովհետև այդպես են նրան խաբել մոսուե Ֆասիտյանի նման մարդիկ, ուստի, նա պատրաստ է նյութական, բարոյական ամեն մի զոհողության, նույնիսկ որքու երջանկության խափանման, միայն թե հնարավոր լինի փրկել իր և որդու հոգին:

Սուր քննադատության ենթարկելով Վիչեն աղայի՝ տգիտության վրա խարսխված այս մոլեռանդությունը, հեղինակը միաժամանակ անխնա ծաղրում է այն, որ կրոնական այդ մոլեռանդության դերի մարդիկ հեռանում են իրենց ծնող ժողովրդից, ոչ միայն մոռանում են, որ պատկանում են այդ ժողովրդին, այլև վնասում են նրան: Այդպիսին է Վիչեն աղաս:

Ազգության ամենակարևոր հատկանիշներից մեկի՝ լեզվի կորստով, նա կորցրել է ազգային ամեն մի հատկանիշ: Նրան հայության հետ կապում է միայն երկու բան՝ իր ընտանիքի անդամների անունների հայկական ծագումը և շփումը իր դասի մի քանի «հայերի» հետ, որոնք նույնպես հեռու են հայ համարվելուց:

Վիչենը՝ տգիտության ու կրոնական հաշիշի տակ թմրած ու մոլորված, պատրաստ է պայքարելու իրեն ծնող ժողովրդի դեմ, ատում է նրան մոլեռանդ կրքոտությամբ: Նա երբ լսում է, որ որդին ցանկանում է ամուսնանալ լուսավորչական աղջկա հետ, կատաղած գոչում է.

— Ի՞նչպես, իմ տղան հայ աղջիկ է առնելու... չէ, այդպիսի բան չի կարող լինել:

Օտարացած հայերի այս տխուր վիճակն էր, որ հուզում էր առաջավոր հայ մտավորականներին և անսահման հրճվանք էր պատճառում կրոնական թույնը այդ միամիտ մարդկանց սրսկող եզվիտ ճիվաղներին:

Հեղինակը քննադատում է անշուշտ Վիչեն աղային, սակայն այդ քննադատությունը ոչնչացնող ու ժխտող չէ, Վիչեն աղան ընթերցողին ներկայանում է որպես օտարներից խաբված ու մոլորված մի մարդ, որը շար չէ ի լոն, թունոտ չէ առհասարակ, ընդհակառակը, զգայուն, գուրգուրող ու հոգատար հայր է: Նրա ամբողջ վատ արարքները հետապնդում են մի նպատակ՝ փրկել որդուն «հանդերձալ կյանքի» փորձություններից: Այս է հեղինակի համոզմունքը Վիչենի ու նրա նմանների նկատմամբ: Հեղինակի լիբերալ աշխարհայացքը հնարավորություն չի տվել տեսնելու մի այլ՝ ավելի խորր հակասություն, որը բաժանում էր Վիչենին իր ժողովրդից՝ նրա դասակարգային պատկանելիությունը, այն, որ նա, լինելով հարուստ հայ կաթոլիկ, շահագործում, կեղեքում էր աշխատավոր մասսաներին, այդ թվում իր մոտ ծառայող հայերին:

Ուրեմն՝ հանձին Վիչեն աղայի՝ հեղինակի նպատակն է պայքարել կրոն-
Տեղեկագիր 1—5

նական մոլեռանդության դեմ և այդ մոլեռանդության արդյունք այլասերման դեմ:

Հեղինակը միանգամայն այլ դիրքերից է մոտեցնել Պապի գործակալ Ֆասիտյանին:¹ Նրա վերաբերմունքը դեպի այս մարդը ամբողջովին ժխտողական է: Եթե ռեալիստական մեթոդը հնարավորություն չի տվել նրան՝ վատիկանի գործակալին դուրս բերել մի հրեշ, ապա նրա հրեշային արարքները հերքում են մարդկային որևէ ազնիվ գիծ՝ նրա մոտ:

Ի տարբերություն Վիլեն աղայի, մոսուե Ֆասիտյանը տգետ չէ, գերի չէ կրոնական մոլեռանդության: Կրոնի ագիտացիան նրա մոտ զենք է քաղաքական որոշ նպատակների հասնելու համար: Դրանից բացի՝ որևէ այլ բան, նա չի ճանաչում: Մարդկային տառապանքը, վիշտը, հուզումը անհաղորդ են նրան: Նա չունի Վիլեն աղայի դյուրագրգռությունը, անհանգստությունը, հուզումը. հանգիստ է, խաղաղ, համբերող ու միաժամանակ ահավոր չափով դաժան, նենգ ու խորամանկ:

Հայ ժողովրդին ջլատելու, անդամահատելու ու նրան կույր մոլեռանդության գիրկը ընկած մի կրավորական մասսա դարձնելու, դրանով իր գաղութարար տերերի էքսպանսիան Թյուրքիայում ուժեղացնելու համար ոչ մի միջոցի առաջ կանգ չի առնում. կատարում է այնպիսի քայլեր, որոնց կարող էր նախանձել եզվիտական միաբանության հիմնադիր Լոյուան, ինչպես բնութագրել է ռևոլուցիոն դեմոկրատ Միքայել Նալբանդյանը:

Ֆասիտյանը քաղաքական որոշակի նպատակներ հետապնդող, պաշտոնական հարաբերություններով քաղաքական շրջանակների հետ կապված մի մարդ է:

Նա իր կատարած առաջադրանքների մասին պարբերաբար, գաղտնի, գրավոր հաշիվ է տալիս իր տերերին, իր հերթին ղեկավարելով լրտեսական մի ցանց, որի ինքնիշխան տերն ինքն է:

Նրա գաղտնագրությունները խորհրդավոր են, լակոնիկ, ավարտվում են իտալերեն «Լա մալատեթթա ունիոնե» կարգախոսով:

Դումն է գրում մոսուե Ֆասիտյանը իր այս գրությունները: Վեպում այդ չի երևում, սակայն ամենայն հավանականությամբ գրում է Կ. Պոլսի օտարերկրյա մի քաղաքական մարմնի, որը նույնպես գործում էր կրոնական քողի տակ:

Որ մոսուե Ֆասիտյանը անձնական նախաձեռնությամբ չէ, որ խանգարում է երիտասարդների ամուսնությունը, այլ կատարում է մի գաղտնի մարմնի առաջադրանքը, այդ երևում է հետևյալ փաստից: Նա Հակոբի մասին իր մարդկանցից տեղեկություն ստանալուց հետո, իր նամակում ավելացնում է հետևյալը.

¹ Ֆասիտյանը պատմական անձնավորություն է: Ամենայն հավանականությամբ հեղինակը նկատի ունի Անտոն Հասունյանին (1809—1884), որը ավարտելով «Հոռմի Պրոպագանդայի» դպրոցը, Վատիկանի որոշակի առաջադրանքով ամբողջ կես դար աշխատեց հայ ժողովրդի ջլատման համար, դիմելով ամենաստոր ու խարդախ միջոցներին: Նրա հակաժողովրդական գործունեության դեմ դուրս եկան հայ առաջավոր այնպիսի մտածողներ, ինչպիսիք էին բանաստեղծ Մ. Պեշիկթաշլյանը, վիսպառն Միրենցը և ուրիշները, որոնք ուժին պայքար ծավալեցին Հասունյանի՝ օտարացման քաղաքականության դեմ:

Պապը Հասունյանի հեղինակությունը բարձրացնելու նպատակով 1846 թվին նրան դարձրեց Պոլսի հայ կաթոլիկների պատրիարք, իսկ 1867 թ. կաթողիկոս: Այս միջոցառումները սակայն, չօգնեցին, Հասունյանի նկատմամբ առաջացած ատելությունը ստացավ

«Թե Հակոբից վախենալով մեր շփոթվելու համար ուրիշ իրավացի էինք. օրեց-օր ավելի լավ եմ հասկանում, որովհետև հենց այս բոլորիս լուր ստացա, որ մի հայ աղջկա հետ կապեր է հաստատել, տեսնենք ինչպես պիտի կարողանանք արգելել այս բանը:

Հույսս այն բանի վրա է, որ հայրը մեր ձեռքին է»:¹ (Ընդգծումը մերն է — Դ. Սա.):

Այս հետ-գրությունը շատ բան է պարզում: Նախ հայտնի է դառնում, որ Հակոբը նախքան Ագապիի հետ կապ հաստատելը անհանգստացնում էր պապական գործակալներին: Արդ՝ ի՞նչ առնչություն կարող էր լինել մի օտարերկրյա պետության գործակալների և մի հայ կաթոլիկ երիտասարդի գաղափարների միջև: Այս հարցի պատասխանը տալիս է դարձյալ Ֆասիտյանը: Երբ նա այցելում է Վիչեն աղային և համոզում է նրան, որ միասին պայքարեն սրա որդուն ուղիղ ճամբի մեջ դնելու համար, այդ առթիվ կատարում է մի ուշագրավ խոստովանություն: Դրանից էլ երևում է, որ մոսուե Ֆասիտյանին ու նրա տերերին շատ ավելի զբաղեցնում է Հակոբի հասարակական գործունեությունը, հայ իրականության հետ նրա կապերը, քան լուսավորչականի հետ ամուսնանալը: Երբ Վիչեն աղան զարմանում է, թե ինչպե՞ս է պատահել, որ իր տղան հայ աղջկա հետ է ամուսնանում, Ֆասիտյանը ասում է, որ զարմանալու բան չկա, որովհետև «Հակոբ աղայի վիճակը հայտնի է: Մի երկու տարի է, որ գաղտնի կերպով ազգային գործերին է խառնվում, շարունակ հայերին մոտիկություն է ցույց տալիս:» (Ընդգծումը մերն է — Դ. Սա.):

Ահա թե ինչից է վախենում պապական գործակալը: Օտարերկրյա գաղութարարները նյութական հսկայական միջոցներ էին վատնում, որ հայ ժողովրդին ջլատեն, նրա մի մասին այլասեռեն, օտարացնեն, դարձնեն իրենց գործիք և ահա հենց այդ խավերի ներկայացուցիչ երիտասարդը, փոխանակ ծառայելու նրանց քաղաքական նպատակներին, մոտենում է իր սեփական ժողովրդին, միջամտում է նրա հասարակական աշխատանքներին և, որ ամենից կարևոր է, այս բոլորը կատարում է գաղտնի:

Մոսուե Ֆասիտյանին անհանգստացնում է այն, որ Հակոբը ազդեցիկ շրջաններում սիրված լինելով, կարող է օրինակ ծառայել շատ շատերին, իսկ այդ կքանդի հենց այն աշխատանքը, որ իրենք կատարել են: Նա հենց այդպես էլ ասում է Վիչեն աղային:

«Զեռ որդուն հավատք ընծայող շատ մարդիկ կան, բոլորն էլ ուրախանալուց բացի, իրենք էլ նրա նման բաներ կկատարեն, այն ժամանակ վերջը ո՛ւր

համաժողովրդական բնույթ: Պապը հարկադրված եղավ Անտոն Հասունյանին կանչել Հռոմ և զրկել նրան պաշտոնից (Հ. Աճառյան, «Անձնանունների բառարան» հատ. 1, էջ 178):

Անտոն Հասունյանը համարվում էր դավաճան, խառնակիչ: Ըստ երևույթին վեպի բացասական հերոսի աղդանունն էլ Ֆասիտյան պետք է ստուգաբանել թուրքերենում գործածական՝ արաբերեն ֆեսատ, փափոտ—խռովաբուր, դավաճան բառերով:

Վեպում Ֆասիտյանը իր տերերին դրած նամակները վերջացնում է խալիբեն և ա մալաուեթիա ունիոնէ նախադասությամբ, որը նշանակում է «անիծյալ միություն»: Ըստ երևույթին պապական գործակալները այս նախադասությամբ անիծյալ էին համարում ոչ միայն առհասարակ հայ ժողովրդի միություն, միասնականության գաղափարը, այլև «Համաղղյաց Միությունը», որը հիմնվել էր 1848 թվին, այսինքն վեպի լույս ընծայումից 3 տարի առաջ:

¹ «Ագապի Հիքեանի», Կ. Պոլիս, 1851, էջ 245:

կգնա: Մեր տարածած գաղափարները այլևս առաջ կգնա՞ն: Եթե ազգակցական նկատառումով երկու համայնքները իրար միանան էլ, մեկ էլ ե՛րբ կարող են բաժանվել»:¹

Մոսուե Ֆասիտյանը Հակոբի՝ դեպի իր ժողովուրդը ունեցած հակումը բացատրում է այն բանով, որ մայրը նրան՝ փոքր ժամանակ ուղարկել է հայկական դպրոց: Ուրեմն նա պահանջում է, որ հայ կաթողիկոսները սովորեն այնպիսի դպրոցներում, որոնք հենց առաջին դասարանից մոռացնել են տալիս մայրենի լեզուն, ազգային սովորությունները, օտարացնում են երեխային:

Ֆասիտյանը այլասերման ամբողջ դասախոսությունը կատարում է կրոնի բողի տակ: Եթե իր տերերի հետ խոսում է դիմակաները ցած՝ պարզ, հպարտանում, որ ամեն ինչ կարգին է, որովհետև Հակոբի հայրը իրենց ձեռքին է, ապա Վիչենի հետ խոսելիս նա ներկայանում է գերազանցապես առաքինությունից, մարդասիրությունից դրդված:

Ֆասիտյանը օժտված է խաբելու, կեղծելու, շողոքորթելու հատկություններով:

Հեղինակը այսպես է բնութագրում պապական գործակալին:

«Մոտավորապես հիսուն տարեկան, մազերը մի քիչ սպիտակած, սակայն ինքը դեռևս առույգ ու բարկացկոտ մի մարդու տպավորություն էր թողնում, դիմագիծը շատ դեղնավուն, հոնքերն ու բեղերը սև, աչքերի արտահայտությունը ցույց էր տալիս, որ նա շատ դաժան ու անխիղճ մարդ է, որը սակայն իր դիմագծի վրա իր միտքը չցուցանելու կարողություն ունի»:²

Ո՞րն է մոսուե Ֆասիտյանի հաջողության գաղտնիքը, այն, որ ինչպես որ նա կարողանում է իր դիմագծի վրա չարտահայտել իր մտադրությունները, այնպես էլ, գիտի իր ձեռքին գործիք ու խաղալիք դարձրած մարդկանց համոզել: Այսպես, երբ իր լրտեսներից մեկը՝ ձկնորս Համբարձումն ասում է, թե ինքը՝ Հակոբից վրեժ լուծելու համար պատրաստ է Ֆասիտյանի բոլոր պատվերները կատարել, եզվիտը ասում է՝

— Ո՛չ, այդպիսի բան մի ասա, վրեժ լուծելու նպատակով չէ, որ սկսելու ես, այլ աստծուն հաճելի լինելու նպատակով, որովհետև այդ խեղճն ինքն իրեն դժոխքը նետելու ճանապարհին է գտնվում, աստծու սիրուն պետք է նրան ազատել սատանայի գերությունից»:

Ֆասիտյանը եզվիտական նույնպիսի ձևերով է մոտենում Վիչեն աղային, որսալով նրա թույլ երակը՝ կրոնական սնոտիապաշտությունը և տգիտությունը, հանդերձյալ կյանքի նկատմամբ նրա ունեցած կույր հավատքը:

Հենց որ Վիչենը՝ որպես որդեսեր հայր, մի քիչ տատանվում է, Ֆասիտյանը ասում է.

— Սակայն, Վիչեն աղա, նորից եմ կրկնում, ձեր ձեռքից եկածը չպետք է խնայես, որդիս է ասելով չպետք է խղճաս, հետո ավելի վատ կլինի, մարդ ամենից առաջ աշխատելու է իր սիրածի հոգին փրկելու համար:³

Մեր բերած փաստերը լիովին ապացուցում են, որ հարցը սովորական մի դավանաբանական հարցի մասին չէ, լուկ լուսավորչականի ու կաթոլի-

¹ Աղապի Հիքեաեսի, էջ 252—253:

² Նույն տեղում, էջ 238:

³ Նույն տեղում, էջ 242:

կի ամուսնության խափանման մասին չէ, այլ ամբողջ հայ ժողովրդի ճակատագրի հետ կապված մի խնդրի մասին, այլ խոսքով վեպի հեղինակը գեղարվեստորեն արտացոլել է 50—60-ական թվականներին օտարերկրյա գործակալների դեմ հայ ժողովրդի մղած ծանր ու օրհասական պայքարը, մի պայքար, որը արժանանում էր ժամանակի բոլոր առաջավոր մտածողների համակրանքին:

Դյուլոռեի այն հավաստիացումը, թե «Ագապի» վեպը լուսավորչականության դիրքերից մոլեռանդ պայքար է կաթոլիկության դեմ, ճիշտ չէ: Անշուշտ, հեղինակը՝ մեծ խիզախություն է հանդես բերել այդ աստիճան հարազատորեն արտացոլելով կաթոլիկական մոլեռանդությունը և նրա տխուր հետևանքները: Մեծ հանդգնություն է հայ իրականության մեջ որոնել և գտնել էոթեն Սյուրեզվիտ հերոսներին և նրանց պատկերել տաղանդավոր կերպով, սակայն Դյուլոռեին նկատի չի ունեցել⁹ այն հանգամանքը, որ «Ագապի» հեղինակը նույնքան անողորմությամբ մերկացրել է լուսավորչական դավանանքի պատկանող մարդկանց մոլեռանդությունը: Այդպիսին է Ագապիի հորեղբայր Պաղտասար աղան: Այս մարդու քաղաքական ու կրոնական համոզմունքները վեպում պարզորոշ կերպով չեն երևում, սակայն նրա դիրքը Ագապիի ամուսնության հարցում, ապացուցում է, որ նա ևս գտնվում է կրոնական նույն մոլեռանդության ու տգիտության մեջ, ինչ որ Վիչեն աղան: Հեղինակը ամենևին չի արդարացնում Պաղտասար աղայի դաժանությունը, նա այն կարծիքին է, որ լուսավորչականների այդ աստիճան սուր ու անողորմ դիրքն էլ նպաստում է ազգային երկպառակության խորացմանը: Եթե Վիչեն աղան իր մոլեռանդության մեջ մոլորված զարմանում է, որ իր տղան հայ աղջկա հետ է ամուսնանում ու զրեթե կիսաէքստազի մեջ կրկնում է՝ չէ, այդպիսի բան չի կարող լինել, ապա Պաղտասար աղան էլ, նույն կույր մոլեռանդության դիրքերի վրա կանգնած, իր եղբոր աղջկա՝ Ագապիի երեսին բղավում է, թե, եթե նա փորձի ամուսնանալ կաթոլիկի հետ, ինքը նրանից վրեժ լուծելու համար գերեզմանից կհանի Ագապիի մորը ու նրա դիակը կտոր-կտոր անելով շների առաջ կնետի: Դժվար է պատկերացնել ավելի մեծ մոլեռանդություն, քան Պաղտասար աղայի այս վարքագիծը: Բայց Պաղտասարի մոլեռանդությունը միայն սրանում չի արտահայտվում:

Ուրեմն՝ միանգամայն սխալ է Դյուլոռեի վերոհիշյալ պնդումը, զուրկ որևէ հիմքից: Վիչենն ու Պաղտասարը նույնպիսի սխալ ճանապարհի վրա կանգնած մարդիկ են, նման են միմյանց, սակայն տարբեր՝ մոսուե Ֆասիսյանից:

Այս է վեպի գաղափարական բովանդակությունը:

Այժմ կանգ առնենք վեպի երկրորդ արժանիքի՝ գեղարվեստական կողմի վրա, որը նույնպես, ինչպես տեսանք, բացառիկ գնահատականի է արժանացել նալբանդյանի կողմից:

Մենք արդեն ասացինք, որ նալբանդյանին ամենից առաջ ոգևորել էր այն հանգամանքը, որ անծանոթ հեղինակն իր վեպի նյութը վերցրել է Կ. Պոլսի հայկական կյանքից:

Այդ միջավայրը հեղինակը տվել է միանգամայն հարազատորեն, մեծ տաղանդով, երգիծական դիպուկ բնութագրումներով:

Ոչ միայն գրականագետը, այլև պատմաբանը, ազգագրագետը շատ նյութ կարող է քաղել այս գործից:

Վեպը ընթերցողի առաջ վերականգնանացնում է 19-րդ դարի կեսերի Պոլիսն իր մի շարք բնորոշ գծերով ու մանրամասնություններով: Տրված է Պոլիսը իր ցածրիկ տներով, ծովափնյա վերանդաներով, որտեղ նստած մարդիկ ծխամորճ են ծխում ու դիտում շրջապատի մեռելային ամայությունը, տներում պլպլացող ձեթի կամ նավթի ճրագի առկայծումը:

Հեղինակը մեծ տաղանդով է տվել այս տների բնակիչներին, արևելյան մեղկության ու անշարժության մեջ թավալվող այն մարդկանց, որոնք ցերեկը տարված են իրենց առևտրական գործարքներով, իսկ երեկոները վերցրած իրենց մոմե լապտերը, ամփոփված իրենց թանձր վերարկուների մեջ, շտապում են միմյանց տուն՝ ժամանակ անցկացնելու, թղթախաղի սեղանի շուրջ շարունակելու ցերեկը ընդհատված խաբբուսյական գործարքները: Նրանք ծայրաստիճան անտարբեր են ու անհոգ դեպի հասարակական կյանքը:

Այդ մարդիկ գրպանով հարուստ են, հոգով աղքատ, մտավորապես սնանկ: Նրանք չեն հետաքրքրվում ոչ շրջապատի վիճակով և ոչ իրենց հարազատների մտավոր զարգացմամբ: Հասարակական այդ խավի առօրյան միօրինակ է, տաղտկալի, անիմաստ ու անօգտակար: Ծերունին քարշ է տալիս իր աննպատակ կյանքը, երիտասարդը խամրում, թոռմում ժամանակից շուտ, առանց որևէ օգուտ տալու ոչ իր հասարակությանը, ոչ էլ իր ընտանիքին:

Հասկանալի է, որ նման այլասերված միջավայրի ծնունդ երիտասարդությունը միանգամայն կանգնած է կործանման եզրին: Այդ երիտասարդությունը չունի առաջադիմելու ձգտում, բարձրանալու ցանկություն, ուսումը, դաստիարակությունը, կուլտուրան, ազնվական ընտանիքների այդ երիտասարդները տեսնում են բացառապես եվրոպական քաղքենիական կենցաղին կապկորեն նմանվելու մեջ: Այդ երիտասարդները սիրում են հագնվել փարիզյան մոդայով զգեստներ, հաճախ չիմանալով անգամ, թե Փարիզում տարվա որ եղանակին ինչպիսի գույնի շոր է նպատակահարմար համարվում: Նրանք չիմանալով ֆրանսերեն լեզուն, սիրում են խոսել այդ լեզվով, աղավաղելով գրեթե յուրաքանչյուր բառ ու արտահայտություն: Նրանց իդեալը փարիզյան սուս-հակի ու գոնոմանի կյանքն է, որին նմանվելու համար ոչ մի զոհողության առաջ կանգ չեն առնում, ոչ նյութական, ոչ բարոյական:

Այս միջավայրում առկա է նաև թուրքացման ուժեղ տենդենցը, որը տիպական էր հատկապես դավանափոխ հարուստ կաթոլիկ ընտանիքների համար: Մայրենի լեզուն ամբողջովին մոռացած, հայ իրականությունից միանգամայն ձտրված, օտարացած այդ վերնախավային ընտանիքներում չափահասների խոսակցական լեզուն բացառապես թուրքերենն է:

Ահա այսպիսի ֆոնի վրա են գծագրված վեպի մի շարք հերոսները՝ Ռուբենիկը՝ շաղակրատ, տգետ ու անբան մի արարած, որը շնորհիվ հոր հարստության ապրում է ապարանքի մեջ, ունի իր կահավորված ու փարթամ սենյակները, պահում է ծառաներ, աղախիներ: Այլասերված այս երիտասարդի բնորոշ գծերն են ծայրաստիճան թեթևամտությունը, կնամոլությունը, խաղամոլությունը, զվարճասիրությունը:

Ռուբենիկի աղան գիտի վարպետորեն կեղծել, շողոքորթել, բանաստեղծական երևակայություն գրգռող պատկերներով դիմել կանանց, իրեն համարելու նրանց ծառա, նրանց ակնարկի առաջ հալչող ու անէացող մի էակ:

Ռուբենիկի միջավայրի մարդ է Ֆուլիկը, այդ ջահել աղջիկը ապականվել ու կործանվել է հարուստ փշացած ընտանիքի մեջ: Նրա և նրա ընկերուհիների

ամբողջ հոգսը տղամարդկանց դուր գալն է, արհամարհելն ու արհամարհելով որսալը: Այսպես է նա որսում Ռուբենիկին ու ամուսնանում նրա հետ: Ֆուլիկը շունի կանացի ամոթխածություն, հեզություն, մեղմություն: Նա թղթախաղի սեղանի ջերմ հաճախորդ է:

Ռուբենիկի և Ֆուլիկի ծնողները, Սարգիս աղան, Անտոն աղան, Թերեզա ու Վարդենի տուտունները, նրանց թղթասեղանի մշտական հաճախորդներ Բառնիկ աղան ու Մարտիկ աղան լրացնում են այն գալերեան, որը մեծ հարազատությամբ ցուցադրում է 19-րդ դարի կեսերի պոլսական արիստոկրատական կյանքը: Սրանցից յուրաքանչյուրը ներկայացված լինելով հանդերձ իր անհատական շեշտված բնավորության գծերով, այդպիսին է հատկապես Վարդենի տուտուն, — նույն միջավայրի հարազատ կերպարներն են, նույնպիսի համոզմունքներով ու նախասիրություններով, նույնպիսի թույլ մտավոր կարողություններ ու սահմանափակ գիտելիքներով:

Հեղինակը շատ ավելի թանձր գույներով է նկարագրել իր այս հերոսներին, քան դրական կերպարներին:

Հեղինակի համակրությունը, սակայն մի այլ խումբ մարդկանց կողմն է, որոնք գտնվելով հանդերձ հարուստ շրջապատում, տարբեր են իրենց նախասիրություններով ու հակումներով: Հեղինակի բուրժուական աշխարհայացքը հնարավորություն չի տվել նրան դրական հերոսներ որոնելու դեմոկրատական խավերի մեջ: Նա այդ հերոսներին որոնել ու գտել է նույն բարձր շրջապատում: Եթե այդ կերպարները տիպական չեն հարուստ, ազնվական շրջապատի համար, ապա, այնուամենայնիվ իրենց ազնիվ ու վեհ ձգտումներով, զաղափարներով, բարոյական բարձր նորմաներով ու ջրմռնողությամբ հակադրվում են ապականված միջավայրին: Հեղինակի ձգտումն է եղել ոչ թե աշխատավոր խավին հակադրել հարուստներին, այլ այդ հարուստ դասին ուղղել, ճամբի բերել, նրանց միջից դուրս եկած ազնիվ մարդկանց օրինակով դաստիարակել մյուսներին:

Այդպիսի մարդկանցից է վեպի հերոսուհին՝ Ագապին: Ագապին նույնպես բարեկեցիկ ընտանիքի ծնունդ է: Ծիշտ է, նա կրոնական մոլեռանդության զոհ է եղել մանուկ հասակից և զրկվել է ծնողներից, սակայն մեծացել է այնպիսի միջավայրում, որը նրան հնարավորություն է տվել ձեռք բերելու անհրաժեշտ կրթություն:

Ագապին միանգամայն հակապատկերն է Ռուբենիկի սիրած Ֆուլիկ տուտուի, որի ամբողջ երազանքն ու տենչը թղթախաղի սեղանից բարձրացող ծխախոտի քուլանների մեջ է: Ագապին պարկեշտ է, ազնիվ, համեստ ու բարոյական, ամոթխած չէ, հոգատար մարդկանց նկատմամբ:

Ագապին այլ գծերով էլ տարբեր է Ֆուլիկից: Նրա այս առաքինի ու վեհ հատկանիշները ամենևին պատճառ չեն դառնում, որ նա հարկ եղած դեպքում դրսևորի իր ուժեղ անհատականությունը, կամքի ուժը, սկզբունքայնությունը: Սերը նրան ոչ միայն չի թուլացրել, շփոթել, այլ ներշնչել է ուժ, հավատք ապագայի նկատմամբ: Նա ընդհանուր առմամբ լավատես է ու ըմբոստ ոչ միայն բարոյական կեղծ նորմաների դեմ, այլև կրոնական հավատալիքների դեմ:

Ագապիի համոզմունքների տեր, նրա ազնիվ գծերով օժտված երիտասարդ է նրա սիրած տղան՝ Հակոբը: Հակոբը չնայած Ռուբենիկի ընկերն է, սակայն իր կյանքով, կենցաղով, սովորություններով և մանավանդ համոզմունքներով նրա հակապատկերն է: Տարբեր են նրանց կյանքի ուղիները: Ընթերցողը վե-

պի առաջին էջերից նրանց տեսնում է միասին, բայց տարբեր ճանապարհներով ընթացող:

Հակոբի կերպարը վեպում գծագրված է երկու ուղղությամբ: Մի կողմից նա հակադրվում է Ռուբենիկին, մյուս կողմից պայքարում Ֆասիստյանի դեմ: Առաջին դեպքում Հակոբը մեզ ներկայանում է ոչ թե որպես բարոյախոս, այլ իր անձնական կյանքով լավի օրինակ տվող: Այս դեպքում նա ուժեղ է, կամքի տեր, ամենևին չզիջող, երբեմն արհամարհող: Այդպես չէ Ֆասիստյանի հետ պայքարելիս: Անհավասար են կողմերը, պայքարի մեջ թույլ է Հակոբը: Նա չունի իր դաժան ու ահեղ թշնամու դեմ վճռական մարտի բռնվելու ուժ, կարողություն, միջավայր և, որ ամենից կարևորն է, չունի թիկունք: Նրա ամուսնությունը համաձայն չէ ոչ իր հայրը, ոչ աղջկա հորեղբայրը, ոչ իր դավանած կաթոլիկական դավանանքի տեր մարդիկ և ոչ էլ սիրած աղջկա դավանած լուսավորչական համոզմունքի տեր միջավայրը:

Ազգային ու Հակոբը դուրս են եկել նույն հարուստ խավից, սակայն հակադրվում են այդ խավին ոչ միայն իրենց առօրյա զբաղմունքով ու սովորություններով, առհասարակ թղթախաղի փոխարեն ընթերցանություն, նվիրվելով, ընտանեկան միապաղաղ փոխայցելությունների փոխարեն հասարակական կյանքի հետ շփվելով, այլև իրենց ազատամիտ գաղափարներով ու համոզմունքներով:

Նրանք չեն բաժանում իրենց ծնողների հնացած, իր դարն ապրած հայացքները ամուսնության վերաբերյալ: Նրանք համոզված են, որ դավանական տարբերությունները երբեք չեն կարող խանգարիչ հանգամանք հանդիսանալ միմյանց սիրող երկու զույգերի երջանկության ճանապարհին: Համոզված են այդպես և սակայն դժբախտ են: Ինչու: Ոչ թե այն պատճառով, որ թույլ են, անզոր ծնողների դեմ պայքարելիս, ոչ թե ծնողական հնազանդությունն է նրանց պորձանում, այլ մի կրքոտ, անտեսանելի ուժ, խորհրդավոր մի հետապնդում, որի զոհերն են երկուսն էլ: Գաղտնի ու ահավոր այդ ուժն է, ահա կաթոլիկ հոգևորական ազենտ Ֆասիստյանը: Այս մարդը երկու երիտասարդների երջանկությունը խափանելու, նրանց ամուսնությունը արգելելու համար կատարում է եզրին սկան սարսափելի դաժանություններ:

Հելլենակը մեծ վարպետությամբ է նկարագրել այն մոմենտը, երբ Հակոբը ստանում է հուսահատ Ազգայի նամակը և պատրաստվում մեկնել նրա տունը: Մինչդեռ Վիլենը իրար է անցնում, ցանկանում է խանգարել, որ որդին չգնա աղջկա տունը, պապական գործակալը հանգիստ ու անվտանգ սպասարանում է, որ անհանգստանալու որևէ հիմք չկա, ինչ որ պետք է կարվի և նա տեղ չի հասնի: Այդպես էլ պատահում է: Ֆասիստյանի ջանքերով նա կես ճանապարհին ձերբակալվում է:

Վեպում կան մի քանի հերոսներ, որոնք, ճիշտ է, երևում են շատ քիչ, գրծված են մակերեսային շտրիխներով և նրանց նկարագրման մեջ չի երևում ռեալիստ հեղինակի խոշոր տաղանդը, սակայն այնուամենայնիվ ուշադրալ են: Դրանցից են Ռուբենիկի ծառաները: Նրանց ընթերցողը չի տեսնում իրենց առօրյա կյանքում, չի լսում նրանց դատողությունները հասարակական կյանքի մասին, տեսնում է միայն դուռը բաց անելիս, փակելիս, տերերի զանազան կտրգողությունները կատարելիս, սակայն այդ մասնակի նկարագրությունների մեջ էլ նկատելի է, որ ծառաները դեմ են իրենց տերերին: Նրանք քմծի-

ծաղով, արհամարհանքով ու արգահատանքով են նայում հարուստ, բայց դատարկամիտ ռուբենիկներին:

Անհամեմատ դրական գույներով է նկարագրված Ագապիի ծառա Նիքուլան, որը ազգությամբ խորվաթ է: Նա ազնիվ է, անձնագոհ, նվիրված, գիտի իր կյանքի գնով պաշտպանել Ագապիին:

Վիպական տեխնիկան այս վեպում շատ ավելի բարձր է, քան 50—60-ական թվականների որևէ հայ վեպում: Նախադասին գրավող հանգամանքներից մեկն էլ եղել է այդ: Վեպն ունի կուռ սյուժետ, որը երբեմն, հատկապես միջավայրի բնութագրման մեջ, շեղվում է բուն նյութից, սակայն վերջիվերջո ամբողջական է, միասնական:

Ամբողջ վեպը բաժանված է 16 գլուխների, որոնցից յուրաքանչյուրն օրվանապես կապված է մյուսի հետ և ընթերցողը ամեն մի գլխի վերջանալուց հետո սիրով է սկսում կարդալ մյուս գլուխը՝ իմանալու համար թե ինչպիսի լուծում է սպասում նախորդ գլխում նկարագրված հանգուցային հարցերին:

Մինչև Ագապիի հանգես գալը, — իսկ նա հանգես է գալիս մի քանի գլուխից հետո 101-րդ էջում, — վեպում չկա որևէ կոնֆլիկտ, ռեալիստական խոշոր տաղանդով նկարագրվում է հարուստ դասի կյանքը: Չկան պայքարող կողմեր, չկա ինտրիգա:

Վեպի սյուժեն արագորեն զարգանում է՝ հենց որ հանգես է գալիս գլխավոր հերոսուհին և այնուհետև դինամիկ արագությամբ շարունակվում է մինչև վերջը՝ հերոսուհու եղբրական վախճանը: Վեպի ամբողջ ընթացքում ինտրիգան զարգանում է միմյանց բուռն կերպով սիրող զույգի և պապական գործակալ Ֆասիտյանի միջև մղվող պայքարում, որը գնալով ավելի ու ավելի է սրվում, դառնում հետաքրքիր: Այս երկու կողմերի պայքարին միացող մյուս դեմքերը առանձնապես նոր բան չեն ավելացնում վեպի ընթացքի վրա:

Հեղինակն իր հիմնականում ռեալիստական վեպը պարուրել է որոշ ռոմանտիկական գրական շղարշով, որը նպաստում է ինտրիգայի սրմանը, կամ նրա անակնկալ լուծումներին:

Այդպիսին է հատկապես վեպի վերջավորությունը, որտեղ Ագապին թույն խմելով նետվում է ծովը, որպեսզի անձնասպան լինի, իսկ ծովից կիսամեռ հանված՝ սիրածի բազուկների մեջ հոգին ավանգող Ագապիի մահից մոտ մի ամիս հետո մեռնում է Հակոբը, — այս բոլորով հանդերձ, — ամբողջ վեպը հիմնականում ռեալիստական է: Կան ուժեղ, խտացած էջեր ու պատկերներ, որոնք պատիվ կարող են բերել ոչ միայն 50-ական, այլև հետագա տարիների որևէ հեղինակի: Ռեալիստական այդպիսի գունագեղ նկարագրություններ են Ռուբենիկ աղայի ընտանեկան ամբողջ առօրյան, Անտոն աղայի բնակարանի նկարագրությունը, Վարդենի տուտուի, ձկնորս Համբարձումի և մասնավորապես մոսուե Ֆասիտյանի նկարագրությունը:

Հեղինակը վարպետ է դիալոգների կերտման մեջ: Խուսափելով երկար ու ձանձրալի նկարագրություններից, կենցաղագրական բազմաթիվ էպիզոդներ, հոգեբանական անցումներ տվել է սրամտորեն կառուցված, դիպուկ ու բովանդակալից դիալոգների միջոցով, որոնք աշխույժ են, կենդանի, տիպական և՛ ժամանակաշրջանին և՛ տվյալ հերոսին: Այդպիսի դիալոգների միջոցով է, որ մերկացվում է ազնվական երիտասարդության ֆրանսամոլությունը, նրանց կեղծ ու շինծու վարքերը:

«Ազապիի» լեզուն պարզ է, խոսակցական, համեմված ժողովրդական ասացվածքներով ու առածներով: Ըստ երևույթին իրավացի է Դյուրոտին, երբ նշում է, որ հեղինակի նպատակն է եղել աղբյուրում ժողովրդի վրա, իսկ այդ անհնար էր առանց ժողովրդի կողմից հասկանալի լեզվի որդեկրմանը: Եվ երկրորդ, — իսկ այս արդեն ընդհանուր է նաև մամուլի համար, — «Ազապի» վեպի լեզուն տարբեր է բուն թուրք ժողովրդի խոսած լեզվից: Այստեղ արդեն ուժեղ չափով առկա է հայկական միջավայրի կոլորիտը, հայկական կենցաղի ու սովորությունների շեշտակի ազդեցությունը: Վեպում կրոնական և ազգային գաղափարներ արտահայտող բոլոր տերմինները բացառապես գործածվում են հայերեն բառերով, ինչպես պատրիարխա՛ն, եկեղեցի՛, ֆախանա՛, մայրապետ՛, խոստովանահայր՛, հաղորդություն, պսակ և այլն: Ընտանեկան կոլորիտը պահելու համար հեղինակը երբ նկարագրում է Ազապիի ընտանիքը, չի խոսափում հայերեն արտահայտությունների գործածելուց, դրանով ցանկանալով շեշտել, որ՝ ի տարբերություն Ռուբենիկ աղայի միջավայրի, Ազապիի տան խոսակցական լեզուն հայերենն է: Այսպես, երբ Պաղտասար աղան հրավիրում է Ազապիին իր մոտ, որպեսզի բացատրություն պահանջի իշ սիրային կապի վերաբերյալ, նա հայերեն լեզվով Ազապիին ասում է, նստե՛, փոխանակ գործածելու թուրքերեն օրուր բառը:

Վեպին հատուկ է նաև ոճական հստակությունն ու ծայրահեղ սեղմությունը: Եթե նկատի չունենանք թուրքերեն գրական լեզվի շարահյուսական մանվածապատությունն ու խճճվածությունը, որը ակներևաբար գալիս է արաբերենից, ապա երկը հիմնականում գրված է սահուն ոճով:

Արաբական արտահայտություններով խճճված նախադասությունները, — որոնք նկատի ունենալով է, որ Մ. Նալբանդյանը գրել է թե ինքը ղեկավարության է հասկացել վեպը ու չի կարող թարգմանել, — մեծ թիվ չեն կազմում և հեղինակը գործածել է ոչ թե անգիտակցաբար, տուրք տալով իր արաբերենի իմացությանը, այլ գործածել է դիտակցաբար՝ տիպականացնելով միջավայրը:

* * *

Ո՞վ է «Ազապի Հիբեանի» վեպի հեղինակը:

Հայտնի է, որ վեպը լույս է տեսել առանց հեղինակի անվան: Առաջին անգամ այդ գրքի մասին խոսող, նրա լույս ընծայման հայտարարությունը տպագրող «Արշալույս Արարատյան» թերթին հայտնի չի եղել նրա հեղինակի անունը, կամ իմացել է, սակայն թաքցրել է ինչ-որ նկատառումներով ու գրել է՝ «Հեղինակն իր անունը չի հայտնած»¹: «Արշալույս Արարատյանից» հետո «Ազապիի» մասին առաջին անգամ արտահայտվող Դյուրոտին նույնպես չի իմացել, թե ով է գրել այդ գործը: Նա նույնիսկ վեպի անունը չի հիշատակել: Նրա մասին խոսել է հերոսուհու անունը հիշելով: «Մեղու» պարբերականը ևս այդ մասին ոչինչ չի ասում, իսկ Միքայել Նալբանդյանը շատ որոշակիորեն գրել է՝ «Թե ով է այդ ազնիվ հեղինակը, մեզ հայտնի չէ, գիրքը տպած է անանուն»:

Հետաքրքրական է այն հարցը, թե ե՞րբ է կարդացել Նալբանդյանը վեպը, բանտում՝ Սոս և Վարդիթեր՝-ի կրիտիկան՝ գրելու օրերին, թե՞ Կ. Պոլսում

¹ «Արշալույս Արարատյան», 1852, № 412:

դտնված ժամանակաշրջանում: Ագապիին նվիրված վերոհիշյալ հատվածի մեջ Նալբանդյանը նախ գրել է հետևյալ տողը «Գործի սկզբից մինչև վերջը երբ կարդում եմք նորան»: Ապա այդ կարդում եմք բառերը ջնջելով գրել է «գործի սկզբից մինչև վերջը... երբ կարգում էինք...» և այլն:¹

Մնում է ենթադրել, որ Նալբանդյանը վեպը կարդացել է բանտարկությունից առաջ, ամենայն հավանականությամբ 4. Պոլսում գտնված օրերին: Այդ շեպքում ինչու իր Պոլսի բարեկամներին՝ Սվաճյանին, Թագվորյանին և մյուսներին չի հարցրել, թե ով է դրա հեղինակը: Հնարավոր է, որ Սվաճյանին և նրա ընկերներին էլ հայտնի չի եղել այդ բանը: Անհավանական չէ նաև այն, որ Նալբանդյանը իմացել է գրքի հեղինակի ով լինելը, սակայն չի հայտնել, նախ այն պատճառով, որ գրական էթիկային դեմ էր այդ և երկրորդ՝ գուցե այդպիսի անխոհեմության արդյունքը լիներ հեղինակի հալածումը Պոլսում:

Ով կարող էր նման մի վեպ գրել 1850-ական թվականներին:

4. Պոլսում այդ ժամանակ ընդամենը 5—6 հայ հայտնի գրողներ ու բանասերներ են եղել: Դրանք են՝ Գր. Օտյանը, Նահապետ Ռուսինյանը, Հովհաննես Հիսարյանը, Նիկողոս Զորայանը, Կարապետ Փանոսյանը և Հովսեփ Վարդանյանը: Սրանցից առաջին չորսը թուրքերեն չեն գրել, չնայած Ռուսինյանը ծագումով եղել է կեսարացի: Այդ լեզվով գրել են և բավականաչափ մեծ գործունեություն են ունեցել Կարապետ Փանոսյանը և Հովսեփ Վարդանյանը, որոնցից առաջինը պատկանում է լուսավորչական դավանանքին, երկրորդը՝ կաթոլիկական: Թվում է, թե պետք է որ Փանոսյանը լիներ վեպի հեղինակը, որովհետև այն ուղղված է կաթոլիկության դեմ: Սակայն Փանոսյանի կենսագրական տվյալները, որոնց համաձայն նա վեպի լույս ընծայման տարին, այսինքն 1851 թվին դեռևս գրական ասպարեզ ոտք չէր գրել, անհավանական են դարձնում այդ: Հովսեփ Վարդանյանը հենց նույն թվերին արդեն ճանաչված մի դեմք էր, սակայն նա էլ կաթոլիկ է եղել, իսկ վեպն ուղղված է կաթոլիկության դեմ:

Մեր պրպտումները, սակայն, հաստատեցին, որ Ագապիի հեղինակը հենց այդ կաթոլիկ հայն է՝ Հովսեփ Վարդանյանը: Մենք այդ փաստին հանդիպեցինք առաջին անգամ թերթելով 4. Պոլսի գրավաճառների հրատարակած ընդարձակ գրացուցակները, որոնցից մի քանիսի մեջ նկատեցինք «Ագապի Հիքեանսի» 2. Վարդան Նատիր (հազվագյուտ)» արտահայտությունը:

Մեր նկատած բոլոր աղբյուրների մեջ էլ վեպի անունը հիշատակվում է միայն մի տողով, որպես հազվագյուտ գիրք, հեղինակ՝ Հ. Վարդան: Հնարավոր է, որ այս բոլոր աղբյուրները գրքի հեղինակի անունը արտագրած լինեն միմյանցից, քանի որ բուն վեպի վրա չկա անուն: Հետևաբար սխալ կլիներ ասել, որ տարբեր աղբյուրներ հաստատում են, որ վեպի հեղինակը Հովսեփ Վարդանյանն է:

Ո՞վ է Հովսեփ Վարդանյանը:

Հովսեփ Վարդանյանի կենսագրությանը մենք հանդիպեցինք երեք հիմնական աղբյուրներում:

1879 թվի մարտ ամսին «Մասիս» օրաթերթը Հ. Վարդանյանի մահվան առթիվ գրել է խմբագրական մի նեկրոլոգ, որտեղ կատարելով հանդերձ որոշ վերապահումներ նրա կաթոլիկական հայացքների համար, Վարդանյանին

¹ Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 3, էջ 120:

շատ բարձր է գնահատում և գրում է, թե Վարդանյանը «այն նշանավոր անձներեն մին էր, որոնց տեղը բաց կը մնա»¹ 1890 թվին Վարդանյանին հատուկ հռչակած է նվիրել «Հանդես Ամսօրյան», 1912 թվականին՝ Կ. Պոլսում լույս տեսած Վահան Զարդարյանի «Հիշատակարանում» կա մի սեղմ կենսագրական Վարդանյանի մասին: Հովսեփ Վարդանյանի մասին շատ ավելի համառոտ տեղեկություններ են տալիս Ա. Արփիարյանը (Շիրակ, 1905), Հ. Առաքելյանը (Հայկական ՍՍՌ Գրական Թանգարան), որոնք նույնպես հաճախ նշում են նրա երկերի անունները:

Դժբախտաբար սրանցից միայն Զարդարյանին է հայտնի, որ «Ագապիի» հեղինակը Հ. Վարդանն է: Վ. Զարդարյանն իր «Հիշատակարանում» նրան է վերագրում Ագապիի պատմությունը: Բոլոր աղբյուրների հետ Զարդարյանի տվյալների համեմատությունը ցույց է տալիս, որ վերջինս իր կենսագրական փաստերը հիմնականում վերցրել է «Հանդես Ամսօրյայից», բացի մեզ հետաքրքրող տվյալից, որը ոչ «Մասիսը», ոչ էլ «Հանդես Ամսօրյան» ունեն: Մնում է ենթադրել, որ այդ փաստը նա պարզապես արտագրել է իր և ուրիշ գրավաճառների ցուցակներից, մանավանդ որ վեպի անունն է միայն հիշատակում, առանց որևէ բացատրության: Եվ որովհետև միակ աղբյուրը Զարդարյանն է, իսկ Զարդարյանը հենց նույն գրավաճառն է, որի ցուցակի մեջ էլ Ագապիի մասին կա հիշատակություն, կնշանակի մենք ունենք տպագիր միայն մի աղբյուր՝ այդ գրացուցակներից Հիշատակարանին փոխանցված տեղեկությունը, որը կարող էր անշուշտ անհամոռնի թվալ և ոչ հիմնավոր, եթե մենք նկատի չունենայինք այլ նկատառումներ:

Վարդանյանը կարող էր այդպիսի մի վեպ գրել լինելով կաթոլիկ: Այս հարցն է, որ կարող է պարզել գաղտնիքը: Հովսեփ Վարդանյանը 19-րդ դարի երկրորդ կեսի ճանաչված հրապարակախոս ու խոշոր պատմաբաններից մեկն է, որը դժբախտաբար իր հիմնական աշխատությունները գրել է հայատառ թուրքերեն: Նա ծնվել է 1815 թվականին Պոլսում, դաստիարակությունն ստացել է Մխիթարյանների մոտ և 30-ական թվականների կեսերից վերադառնալով Պոլիս, նշանակվում է հաս գյուղի ներսիսյան վարժարանի ուսուցիչ և արքունի վառողապետ Տատյան ամիրայական գերդաստանում տնային ուսուցիչ: Ապա պաշտոնավարում է ծովային նախարարությունում որպես ավագ թարգման, ստանալով փաշայության տիտղոս: Իսկ 50-ական թվականներից մինչև մահը նվիրվում գրականության, պատմագրության ու հրապարակախոսության:

«Ագապիից» ընդամենը մեկ տարի հետո՝ 1852 թվից նա հրատարակում է «Լեւեմուաի հավատիս» հայատառ թուրքերեն պարբերականը, իսկ 1855 թվին լույս է տեսնում նրա մի սովոր աշխատությունը՝ Նապոլեոն Բոնապարտի կյանքի ու դործունեության մասին, նույնպես հայատառ թուրքերեն: 1878 թ. լույս է տեսնում նրա երկհատոր աշխատությունը՝ ռուս-թուրքական պատերազմի մասին, որը նախ որպես թերթին լույս է տեսնում նրա խմբագրությամբ հրատարակվող «Բերճիմանը Էվբյար» թերթում, ապա՝ երկու առանձին հատորներով: Հ. Վարդանյանը հեղինակն է նաև «Էլեկտրական հեռագիր», «Սահմանադրական ճշմարտություններ» աշխատությունների՝ երկուսն էլ արդեն հայերեն լեզվով:

¹ «Մասիս», 1879, № 2920:

Եթե սրանց վրա ավելացնենք և այն, որ Հովսեփ Վարդանյանն իր գրական ու հասարակական գործունեության առաջին տարիներին թաքցնելով իր անուն ազգանունը, ուժեղ պայքար է մղել պապականության դեմ, հետագայում որոշ շահով նահանջելով իր դիրքերից, հանդես է եկել, որպես կաթոլիկական կրոնի պաշտպան և սակայն 1870-ական թվականների վերջերից դարձյալ հարել է լիբերալ սահմանադրական շարժման, ապա մենք պարզ պատկերացում կունենանք այդ անձնավորության աշխարհայացքի էվոլյուցիայի մասին, որը շնայած իր զիզազանքներին, հակասություններին, այնուամենայնիվ ունեցել է մի ուղիղ գիծ, այն է, 19-րդ դարի 60-ական թվականների հայ լիբերալ հոսանքի ազգային գաղափարախոսության պաշտպանությունը, ազգահավաքման անհրաժեշտության կողմնակից, ազգաշլատման, պապական պրոպագանդայի թշնամի, մի բան, որը առաջադիմական էր 19-րդ դարի կեսերի համար:

Ուրեմն՝ Հ. Վարդանյանը եղել է կաթոլիկ, դաստիարակվել է Մխիթարյանների կաթոլիկական դպրոցում, վերադարձին աշխատել է կաթոլիկ ամիրայի տանը, և հենց այդ պաշտոնավարության շրջանում էլ գրել է «Ագապին», հետո դարձել պետական պաշտոնյա, այս փաստերը արդեն բաց են անում գաղտնիքը, թե ինչու նա «Ագապի» վեպը, որ ուղղված էր իր դավանած կրոնի դեմ և մերկացնում էր պաշտոնավարած միջավայրը, պետք է լույս ընծայեր անստորագիծ:

Մ. Նալբանդյանը ճանաչել է Հովսեփ Վարդանյանին, Կ. Պոլսում հանդիպել է նրան: Այս մասին դժբախտաբար չկա ոչ մի հիշատակություն՝ ոչ Մ. Նալբանդյանի աշխատություններում, և ոչ էլ պարբերական մամուլում: Կա, սակայն մի ուշագրավ փաստ, այդ այն է, որ Նալբանդյանը բանտում գտնված օրերին առանձնապես հետաքրքրվել է Հովսեփ Վարդանյանի հայերեն լեզվով լույս ընծայած «Սահմանադրական ճշմարտություններ» աշխատությունով և այդ գրքի մասին «Մասին» պարբերականում լույս տեսած հայտարարությունը՝ ամբողջովին արտագրել է իր ծոցատետրում: Կապ կա՝ արդյոք այս հետաքրքրության և «Ագապիի» միջև, թե սա սոսկ մի պատահական հետաքրքրություն է, դժվար է ասել, սակայն կարևոր է այն, որ այդ թվերին Կ. Պոլսում լույս տեսած նման տասնյակ բրոշյուրներից Նալբանդյանին գրավել է «Ագապիի» հեղինակի գործը: Ամենայն հավանականությամբ Նալբանդյանի հետաքրքրությունն այնպես էլ հագուրդ չի ստացել, որովհետև դրանից կարճ ժամանակ անց նա արսորվեց Կամիշլին և այլևս ընդմիշտ զրկվեց գրական կյանքից:

Ինչպիսի ընդունելություն է գտել «Ագապի Հիքեաեսի» վեպը: Դժբախտաբար մամուլի էջերում քիչ է թափանցել նրա գտած ընդունելության արձագանքները: Դյուլոռիեն այս մասին ունի մի հետաքրքիր վկայություն, որը բավականաչափ բացատրում է այդ երևույթը, և այն, թե ինչու այնուամենայնիվ վեպը լույս տեսնելուց տասնյակ տարիներ հետո հեղինակը ասպարեզ չեկավ և չհայտարարեց թե ինքն է այդ գեղեցիկ աշխատության հեղինակը: Դյուլոռիեն գրել է. «Շնայած հոգևոր իշխանության հալածանքներին, այդ վեպը հազարավոր ընթերցողներ է ունեցել»:¹

Դյուլոռիեի այս վկայությունից երևում է, որ հոգևոր իշխանությունները ոչ միայն դժգոհ են մնացել գրքից, այլև փորձել են արգելել այն, հալածել հեղի-

¹ Дюлорие, Нынешние армяне, стр. 71.

նակին և, չնայած դրան, ընթերցող հասարակայնությունը սիրել է գիրքը և հազարներով տարածել: Եվ արդյոք այդ փաստը չի՞ ապացուցում նաև այն, որ հազիվ մի քանի տասնամյակ անց գիրքը արդեն դարձել էր հազվագյուտ և մենք նրան չենք հանդիպում մամուլում, իսկ 900-ական թվականներից հետո լույս տեսած դրացուցականներում նրա անվան մոտ միշտ կա՝ «հազվագյուտ» բառը:

Վ. Զարդարյանը Հ. Վարդանյանին է վերագրում նաև մի այլ գեղարվեստական ստեղծագործություն՝ «Շաղակրատ մի մարգ» վերնագրով, որի մասին դժբախտաբար ոչ մի լրացուցիչ տեղեկություն չի տալիս: Մեր պրպտումները այս գրքի մասին հրատարակված որևէ նյութ, կամ հենց գիրքը գտնելու ուղղությամբ, անցան ապարդյուն:

Մի համառոտ հիշատակություն ունի դարձյալ Դյուլոռիեն, որը «Ագապի» մասին գրած վերոհիշյալ տողերից հետո շարունակում է. —

«Բոշբողազ ռեզալեսին» (Շաղակրատի խեղկատակությունը) մի գիրք է, որ լույս է տեսել դրանից երկու տարի առաջ, դա էլ մի վեպ է, ուղղված հայ կաթոլիկների դեմ, գրված անբարյացակամ ոգով, ներկայացնում է ծաղրանկարի ձևով, ցույց տալով թե ինչպես նրանք Արևմուտքի բարքերն ու սովորություններն ընդունելու համար հրաժարվում են իրենց բարքերից ու սովորություններից: Բոլորովին էլ չխրախուսելով այդ գրվածքի մեջ գերակշռող աչառու և շրհանդուրժող ոգին, այնուամենայնիվ պիտի ասել, որ տեքստի մեջ գրված գրավյունները սուր են և զվարճալի: Նկարներն ու զարդերը թեև անկատար են, բայց և այնպես չեն զիջում ֆրանսիական էժանագին նկարազարդումներին»:

Դյուլոռիեի այս տողերից երևում է, որ «Շաղակրատը» հետապնդել է նույն նպատակները, ինչ որ «Ագապի» վեպը, նույնպես ուղղված է եղել հայ կաթոլիկության դեմ: Հնարավոր է ենթադրել, որ այդ գործն իր գաղափարական բովանդակությամբ նույնքան ուշագրավ է եղել, եթե ոչ ավելի: Այդ երևում է Դյուլոռիեի ակնհայտնի դժգոհությամբ արձանագրած վերապահությունից: Դյուլոռիեն անշուշտ հիմք ունեցել է, երբ գրել է «բոլորովին էլ չխրախուսելով այդ գրվածքի մեջ գերակշռող աչառու և շհանդուրժող ոգին»:

Հենց այդ աչառու և շհանդուրժող ոգին է «Շաղակրատի» գլխավոր արժանիքը, մի գիրք, որի մասին հնարավոր կլինի ավելի ընդարձակ գրել, երբ կհայտնաբերվի նաև նրա մի օրինակը:

Համենայն դեպս փաստ է, որ «Ագապի Հիքեանսի» և «Պոշպողազ ռեզալեսին» երկերը 19-րդ դարի 50—60-ական թվականների հայ հասարակական կյանքի արձագանքներ են, գրված մեծ տաղանդով և, որպես այդպիսին, արժանի են առանձնահատուկ ուշադրության:

Г. Степанян

О романе „История Агапи“

(р е з ю м е)

Революционный демократ М. Налбандян в одном из своих выдающихся трудов — в критике произведения Прошяна „Сос и Вардигер“ — говоря о зарождении новой армянской литературы, наряду с упоминанием ряда романов, как-то: „Раны Армении“ великого армянского просветителя Х. Абовяна, „Сос и Вардигер“ П. Прошяна и „Тер Саркис“ Г. Тер-Оганесяна, говорит также об одном романе под заглавием „История Агапи“, вышедшем в свет в Константинополе на турецком языке и написанном армянскими буквами, как о произведении, принадлежащем армянскому автору.

Налбандян выражает высокое мнение об этом романе. Он считает его произведением, „вытекающим из армянской жизни, живым и очень трогательным“, в котором „естественное и художественное слиты“. „С художественной точки зрения—говорит Налбандян, „Агапи“ может выдержать самую строгую критику. По своей естественности и психологической правдивости роман этот значительно выше европейских романов“.

Понятно, что произведение, заслужившее такую высокую оценку, должно было привлечь внимание литературоведов Советской Армении, в частности тех, которые занимаются изучением творческого наследия Налбандяна. Однако, многолетние попытки исследователей, направленные на поиски самого романа, или какого-либо труда, относящегося к нему, были тщетны. Не удавалось установить, что представлял собою этот роман, какие вопросы были в нем затронуты и, наконец, кто был автором этого произведения.

В настоящее время в распоряжение Института литературы Академии наук Армянской ССР поступила копия этого романа, снятая на фотопленку. Следовательно, представляется возможным высказать определенное мнение о нем. Изучение романа полностью подтверждает ту восторженную оценку, которую дал Налбандян в период своего наибольшего идейного расцвета. Роман отображает борьбу армянского народа, направленную против католической пропаганды во II половине XIX века. Пропаганда эта под личиной догматики преследовала цель раскола и раздробления единства армянского народа, превращения армянского католичества в политическую базу для европейских колонизаторов. Не случайно, что все современные армянские передовые мыслители, в том числе революционный демократ М. Налбандян и его единомышленники, вели беспощадную борьбу против католической пропаганды, глубоко сознавая его реакционную сущность.

Истинные политические цели католической пропаганды олицетворены в романе в образе папского агента мусье Фасидяна. При осуществлении порученных ему политических заданий Фасидян прибегал к таким чудовищным средствам, которыми мог бы позавидовать сам Лойола, как это метко охарактеризовано М. Налбандяном.

По своим художественным достоинствам „История Агапи“ является значительным событием в армянской действительности 50—60 годов XIX века и своим реалистическим искусством представляет большой интерес и в наши дни. В этом романе талантливо отображены быт, обычаи и образ жизни богатой прослойки армянского общества 40—50 гг. XIX века. В нем беспощадно высмеивается увлечение всем иностранным, чрезмерное подражание нравам французской аристократии. Автор создал красочные образы, типичные и характерные для данной среды. Нам удалось установить также личность автора этой книги, хотя книга вышла в свет без указания имени автора. Роман „История Агапи“ написан в начале второй половины XIX века, известным либералом-публицистом Овсепом Вартаняном (1815—1879).